

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/6

18 հունիսի 2013 թ.

Քննարկվեց <ՏԻԿԲԱԳ> ՍՊԸ 29.05.2013 թ-ի գրությամբ բերված բողոքը « ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ 20.05.2013 թ-ի թիվ 1103624 ստուգման ակտի դեմ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 17.04.2013 թ-ի թիվ 1103624 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <ՏԻԿԲԱԳ> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը « օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է « ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ 20.05.2013 թ-ի թիվ 1103624 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 180.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

<ՏԻԿԲԱԳ> ՍՊԸ-ում փաստացի աշխատանք իրականացնողների և գործող աշխատանքային պայմանագրերի համադրումից պարզվել է, որ թվով 3 աշխատակիցների՝ Մարինե Հովսեփյանի, Անահիտ Մկրտչյանի, Լիաննա Քոչարյանի աշխատանքի ընդունումը ձևակերպված չէ եղել « օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բացակայում էր գրավոր աշխատանքային պայմանագրերը:

Համաձայն «Եկամտային հարկի մասին» « օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի «ա» ենթակետի, գործատուն տվյալ ամսում յուրաքանչյուր չձևակերպված աշխատողի համար հաշվարկում և վճարում է եկամտային հարկ 60.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակը մեկից երեք է՝ ընդամենը 180.000 դրամ:

<ՏԻԿԲԱԳ> ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է.

հիմք ընդունելով « ԿԱ ՊԵԿ նախագահի 17.04.2013 թ-ի թիվ 1103624 հանձնարարագիրը, Սևանի ՏՀՏ ընթացիկ հսկողության բաժնի հարկային տեսուչների կողմից <ՏԻԿԲԱԳ> ՍՊԸ-ում 02.05.2013–08.05.2013 թ.թ. իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը « սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում: Ստուգման ժամանակաշրջան է ընտրվել 22.12.2012–08.05.2012 թթ.:

Ստուգման արդյունքում կազմվել է թիվ 1103624 ակտը, ըստ որի՝ <ՏԻԿԲԱԳ> ՍՊԸ-ի թվով 3 աշխատակիցների՝ Մարինե Հովսեփյանի, Անահիտ Մկրտչյանի, Լիաննա Քոչարյանի աշխատանքի ընդունումը ձևակերպված չի եղել « օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ակտի նախագծին ծանոթանալուց հետո ընկերության կողմից « ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ գրավոր առարկություն է ներկայացվել՝ հիմք ընդունելով հետևյալ հանգամանքները.

1. « օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Անահիտ Մկրտչյանի, Լիաննա Քոչարյանի և <ՏԻԿԲԱԳ> ՍՊԸ-ի միջև պայմանագրերը ներկայացվել են հարկային տեսուչներին:

2. Մարինե Հովսեփյան անունով, ազգանունով անձի ընկերության տնօրենը չի ճանաչում, որի մասին նշել է իր գրավոր առարկության մեջ:

Ընկերության տնօրենի կողմից ներկայացված գրավոր առարկությունը Սևանի ՏՀՏ-ի կողմից հաշվի չի առնվել և ներկայացվել է թիվ 1103624 ակտը (20.05.2013 թ.), որն ամբողջությամբ չի համապատասխանում իրականությանը:

Ընկերությունը խնդրում է ուսումնասիրել ակտում նշված ոչ հավաստի փաստերը, գնահատել հարկային տեսուչների կողմից շինծու տվյալների ներմուծումը և ստուգման ակտը համարել չեղյալ:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած

փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում>:

Քննարկվող դեպքում <ՏԻԿԲԱԳ> ՍՊԸ-ի նկատմամբ կազմված ստուգման ակտով առաջադրվել են լրացուցիչ պարտավորություններ, հետևապես առկա է ընկերության համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության փաստը: Այսինքն, ստուգման ակտի 1-ին կետով արձանագրված խախտման ապացուցման պարտականությունը կրում է ստուգող մարմինը՝ ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Սույն բողոքի քննարկման ընթացքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ տվյալ դեպքում եկամտային հարկի գծով լրացուցիչ պարտավորություններն ստուգման ակտով առաջադրվել են վերոգրյալ օրենսդրական նորմի, այն է՝ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց առաջարկվեց Հանձնաժողովին ներկայացնել այն ապացույցները, որոնք և հիմք են հանդիսացել ստուգման ակտի 1-ին կետում նկարագրված խախտումն արձանագրելու համար, սակայն որևէ հիմնավոր ապացույց, ըստ էության, չներկայացվեց:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում կիրառելի է <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որի համաձայն. <Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել>:


Իր հերթին, համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի <ա> կետի, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ 20.05.2013 թ-ի թիվ 1103624 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ